ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՄԱՆ ՎՏԱՆԳԸ

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.

Եղիշեն V դարում ահազանգել է. «Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ... Տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց»[1]: Դավիթ Անհաղթի միտքը՝ «Ու՞ր հասանէ գիտութիւն, ուր ոչ հասանէ բնութիւն», անսահման բնության ճանաչողությամբ կատարելության հասնելու արտահայտությունն է, քանզի «իմաստասիրութիւն գիտութիւն ունի զիոպիս մարդկան զարդարելոյ»[2]:

Աշխարհաքաղաքական փոփոխվող պայմաններում հայ հասարակության քաղաքական, գաղափարական և հոգևոր ոլորտների խնդիրների լուծումներում կարևորվում է հայրենի պատմության ճանաչողությունը, ինչին կոչված է ծառայել հայագիտական հայեցակարգով պատմական ճշմարտության լուսաբանումը: Մեծ է հայ պատմագիտական ժառանգությունը, սակայն դեռևս հրատարակվում են աշխատություններ, որոնց հեղինակները, անտեսելով պատմության խեղաթյուրման գաղափարական վտանգը, առաջ են մղում իրենց սեփական հիմնազուրկ տեսությունները:

Այսպիսի արատավոր գործելակերպի ակունքներում է աշխարհաքաղաքական շահերով թելադրված կեղծ-քննադատական՝ «գերքննադատությունը», որը, նախ՝ արհեստածին անվստահություն է սերմանում սկզբնաղբյուրների հաղորդումների նկատմամբ, ապա, աղճատելով դրանց իմաստային մեկնությունը՝ ուղղորդում որոշակի քաղաքականացված հունով:

XIX դ. երկրորդ կեսից սկսած՝ առողջ գիտական մտքի կողքին մակաբույծ «գերքննադատությամբ» նենգափոխվում էր Հայկական լեռնաշխարհի՝ որպես հայ ազգի և համաշխարհային քաղաքակրթության բնօրրանի մասին պատմագիտական հայեցակարգը այն «փոխարինելով» հայերի «եկվորության», ինչպես նաև «փուլային» կազմավորման, դրանով իսկ, հայոց քաղաքական, մշակութային և հոգևոր ավելի քան հինգհազարամյա պատմությունն աղճատող և արհեստականորեն «երիտասարդացնող» «տեսություններով»: Հայոց պատմության նենգափոխումն ու մշակութային հուշարձանների ոչնչացումը Թուրք և սրանց համախոհ ցարդարարների ու «գաղափարախոս պատմաբանների» և նրանց հովանավորների համար եղծնագործական ծրագրի մի մասը դարձավ բռնագավթված հայկական հողերի (Արևմտյան Հայաստան, Արևելյան

---

[1] Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1989, էջ 29.

[2] Դաւիթ Անյաղթ, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիւրի (առն երկասիրութիւնք փիլիսոփայականք, Ե. 1950, էջ 148).

[3] Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Ե., 1960, էջ 118:

Հայաստանի որոշ երկրամասեր) վերաբերյալ պատմական հիշողության ջնջման նպատակով:

Մովսես Խորենացու (V դ.) երկը վերջին երկու դարերի ընթացքում մեծ փորձությունների է ենթարկվում: Թվում էր, թե «գերքննադատության» ալիքը անգառնալի տեղատվական փուլ է մտել, և Պատմահոր գործունեության ժամանակաշրջանի վերաբերյալ ծավալված քաշքշուկը, հիմնականում ավարտվելով, այլևս տեղ չէր թողել կասկած հարուցելու նրա երկի՝ Հայկյան ակունքներից սնվող հայեցակարգի նկատմամբ:

Վերջին տասնամյակներին Հայոց պատմության ուսումնասիրության բնագավառում որակական տեղաշարժեր գրանցվելուց բացի, որոշ հրապարակումներում դեռևս առկա են պատմական փաստերի աղավաղումները: Որպես օրինակ կարող է ծառայել քաղաքագետ Ա. Իսկանդարյանի և պատմ. գիտ. դոկտոր (ներկայումս՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ակադեմիկոս-քարտուղար) Բ. Հարությունյանի հոդվածը, որտեղ մասնավորապես դրված է. «Ընդհուպ մինչև անցած դարի (նկատի ունեն XIX դ.- Դ. Է.) կեսը աշխարհիկ մտավորականություն Հայաստանում չի եղել, գոյություն չի ունեցել նաև աշխարհիկ հասարակական կյանք, իսկ հետևապես՝ նաև պատմություն, այդ բառի ժամանակակից իմաստով... Հայկական պատմական առասպելին բնորոշ է հայ մշակույթի պատկերի և տեղի չափազանցությունը, ինչպես նաև նրա մեկուսացումը հարևանների մշակույթից: Պոպուլյար գիտակցության մեջ ամուր տեղ է զբաղեցրել հայերի մասին հայեցակարգը, որ միակ քաղաքակիրթ ժողովուրդն է՝ շրջապատված վայրենիներով: Ուռճացված էթնոկենտրոնացման արդյունքը եղավ զուտ ազգային մշակույթի շատ մեկուսի պատկերը»[4]: Թե ի՞նչ է նման բովանդակությամբ «պոպուլյար գիտակցություն» հույժ կասկածելի հասկացությունը, և ո՞վքեր են այն կրողները, թողնում ենք հեղինակների խղճին:

Իսկ ճշմարտությունն այն է, որ հայ աշխարհիկ մտավորականության և հասարակական կյանքի ակունքները հազարամյակների խորքում են: Հայոց պետության հզորացման գործում մայրենի լեզվի կարևորությունը նկատի ունենալով՝ Հայկյան Արամ թագավորը արևմուտքում «զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտուն և զՈվկիանու», այսինքն՝ փոքրասիական տարածքը ազատագրելուց հետո «իւր թողեալ զոմն Մշականուն յազգէ իւրմէ եւ բիւր մի զօրացն ի վերայ աշխարհին՝ եւ ինքն դառնայ ի Հայս: Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական...»[5]:

Պատմության ընթացքում Հայոց արքաները իրենց շուրջն էին համախմբում արվեստի և գիտության գործիչներին[6], դրում ողբերգություններ,

---

[4] **Искандарян А., Арутюнян Б.,** *Армения: "карабахизация" национальной истории (Национальные истории в советском и постсоветских государствах, сб. статей, М., 1999, с. 148-149).*

[5] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 46:*

[6] *Տիգրան II Մեծի պալատում էին Աթենքից վտարված հռետոր Ամփիկրատեսն ու գրող և փիլիսոփա՝ հակահռոմեական տրամադրություններով հայտնի Մետրոդորոս Սկեպսացին (Plut., Lucul., XXII, 2-7. Strabo, XIII, 1. Plin., Nat. Hist., XXXIV, 16, 2) :*

ճառեր, պատմական երկեր[7], հոգևոր և քաղաքական բովանդակության նամակներ[8]: IV դարում հունաց աշխարհում մեծասլես համբավված ճարտասան և մանկավարժ Պարույր Հայկազնը (Պրոերեոիոս) ճարտասանության գպրոց էր հիմնել Աթենքում[9]: Հասարակական կյանքի վառ դրսևորումն էր հնագույն ժամանակներից հայտնի Աշխարհաժողովը:

Միջնադարում հայ ազգային խնդիրներում աշխարհիկ և եկեղեցական գործիչները հաճախ միտհամուռ էին գործում: Միևնույն ժամանակ վանական ուսումնական կենտրոններում աստվածաբանության և հոգևոր-եկեղեցական առարկաների կողքին ուսումնասիրում էին փիլիսոփայություն, ճշգրիտ գիտություններ և արվեստագիտություն[10]: Հայ աշխարհիկ մտավորականության ընտրանին՝ մեծանուն գիտնականները, արվեստի ու գրականության, պետական, ռազմական գործիչները, հայրենիքում, արտերկրում՝ հայկական գաղթօջախներում իրենց շուրջ համախմբելով ազգի մտավոր ու քաղաքական ուժերը, ուղղորդում էին հասարակական-քաղաքական կյանքը ազգապահպան հունով: XVIII դ. վերջից դրան մեծագույնս ծառայելու եկավ հայ մամուլը, որը, հրատարակվելով արտասահմանում («Ազդարար», «Տարեգրութիւն», «Արշալոյս Արարատեան», «Բազմավէպ», «Ազգասէր Արարատեան», «Հայաստան» և այլն), նվիրվել էր ազգային կրթության, գիտության և ազատագրական պայքարի գործին:

Անցնենք մյուս դիտողությանը. արդյո՞ք Հայաստանը մեկուսացված է եղել հարևանների մշակույթից: Ամենևին ո՛չ: Հիշենք, որ Մեսրոպ Մաշտոցը հայերեն նշանագրերի գյուտից հետո նշանագրեր ստեղծեց վրացերեն և, աղվանական ցեղերից՝ գարգարացիների լեզուների համար, իսկ շնորհիվ V դ. հայ թարգմանիչների պահպանվել են համաշխարհային նշանակության մեծարժեք աշխատություններ, որոնց կորած բնագրերն այժմ վերականգնվում են ըստ հայերեն թարգմանությունների: Հայոց պատմությանը նվիրված՝ հայ պատմիչների երկերը կարևոր սկզբնաղբյուրային տեղեկություններ են պարունակում նաև հարևան ժողովուրդների պատմության մասին:

Օտարազգի մեծանուն գիտնականները և գործիչները բարձր են գնահատել հայոց ներգրումը համաշխարհային մշակույթի գանձարանում:

---

[7] Արտավաղդ Բ-ն ստեղծագործություններ է գրել հունարեն (Plut., Crassus, XXXIII, 1):

[8] Եդեսիայում (Ուռհա) դահակալող «Տիգրանի եղբոր՝ Արշամի որդու»՝ Արտաշեսի թոռ՝ Հայոց Աբգար արքան մեկնում է Պարթևաստան, կարգավորում այնտեղ ծագած խնդիրները, սակայն վերադարձին հիվանդանում է և նամակով խնդրում է Քրիստոսին իրեն բուժել: Փրկչի համբառնալուց հետո Եդեսիա է գալիս Թադեոս առաքյալը և բուժում Աբգարին ու քաղաքի բոլոր հիվանդներին: Հայոց արքաներից Աբգար V-ը (4-7, 13-50 թթ.) առաջինն ընդունեց քրիստոնեությունը: Նա նաև նամակներ է գրել Տիբերիոս կայսրին և պարսից արքային (Մովսէս Խորենացի, էջ 149-156, հմմտ. Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 46-52):

[9] Аревшатян С. С., Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Е., 1973, с. 25-26.

[10] Հայ մտավորականության պատրաստման շտեմարան էին Գլաձորի և Տաթևի համալսարանները: Գլաձորի համալսարանն անվանում էին «Երկրորդ Աթենք և մայրաքաղաք ամենայն իմաստից», «Մայրն իմաստից» (Ղևոնդ Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 133):

Այս ամենը, ինչպես նաև ներկայումս արտասահմանյան երիտասարդների հետ (Ռուսաստան, Ֆրանսիա, Իտալիա, Հունգարիա, ԱՄՆ, Արգենտինա, Իրան, Վրաստան, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Չինաստան, Հնդկաստան և շատ այլ երկրներ) ծավալվող մշակութային կապերը վկայում են «Հայ մշակույթի պատկերի և տեղի չափաղանցության կամ հարևանների մշակույթից նրա մեկուսացման» մասին վերոհիշյալ «դրույթի» բացարձակապես սնանկ լինելու մասին:

Տարիներ անց Բ. Հարությունյանը մեզադրանք ներկայացրեց իր հեղինակակցին՝ գրելով, որ Մոսկվայում լույս տեսած հոդվածը «կատարելապես տարբեր էր Ա. Իսկանդարյանին իմ ներկայացրած տեքստից: Ա. Իսկանդարյանը այն էապես փոփոխել էր, ավելացրել և հրատարակել առանց ինձ հետ համաձայնեցնելու: Հոդվածին այդ տեսքով ես ծանոթացել եմ միայն լույս տեսնելուց հետո: Բատեյով մասուլի որոշ հրապարակումներից՝ ժողվածուն 2003 թ. վերահրատարակվել է, սակայն վերջինս ես չեմ տեսել ոչ ձեռագիր և ոչ էլ տպագիր վիճակում: ԶԼՄ որոշ հրապարակումներում, դրա հետ կապված, ինձ ներկայացվել են ինչ-ինչ մեղադրանքներ: Ուստի, իրերի իսկական դրությունը գիտական հասարակայնությանը ներկայացնելու համար ստիպված հրատարակում եմ իմ կողմից Ա. Իսկանդարյանին հանձնված տեքստը առանց որևէ փոփոխության...»[11]:

Եթե, իրոք, իր տեքստը աղավաղված էր, ապա ավելի պատշաճ կլիներ, որ Բ. Հարությունյանն այդ մասին ահազանգեր հենց դրա հրապարակումից հետո, այլ ոչ թե հինգ տարի լռեր և միայն մի չարք քննադատական հրապարակումներից հետո կասկածելի փաստարկներով արդարացներ իր լռությունը:

Իր ենթադրյալ բնագրային հոդվածում Բ. Հարությունյանը գրել է. «Վերջին տասնամյակում... հասարակական մտքի զարգացման մեջ ավելի էր գերակայում... ինքնարտահայտման ազատության միտումը... ինչը նպաստում էր, չնայած իշխանության գլուխն անցած ՀՀՇ-ի մտցրած որոշակի սահմանափակումներին, պատմական գիտության բավական արագ զարգացմանը: Վերջինս, սակայն, առաջացրեց նաև բաղում ոչ հիշտ, սխալ դրույթներ, որոնք մի չարք դեպքերում ազգային սահմանափակության արտահայտություններ էին... որպես դրական սկիզբ միայն նշենք, որ... ոչ-մասնագիտական... ամսագրերի էջերում լուսաբանվել են... Հայ ժողովրդի ծագման, Ուրարտու-Հայաստան հասկացությունների փոխկապակցության հարցերը... 1988 թ. հետո... Հայաստանի առաջին Հանրապետության իդեալականացման որոշակի միտում սկսեց դիտարկվել... Փորձեր են արվել ամեն գնով ապացուցել Ուրարտուի նույնությունը Հայաստանի հետ...»[12]

Բավական տարօրինակ է հեղինակի խոսքը «ազգային սահմանափակության» կամ իր սեփական ժողովրդի պատմության որևէ ժամանակաշրջանի «իդեալականացման» մասին:

---

[11] Арутюнян Б., Историческая наука в Армении в 1988-1998 гг. [ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 2004, N 2, էջ 55]:

[12] Նույն տեղում, էջ 56, 63, 66:

«Ուրարտուի նույնությունը Հայաստանի հետ» նոր դրույթ չէ հայ և օտար պատմագիտության մեջ: Դեռևս XIX դ. երկրորդ կեսից – XX դ. սկզբին ուշադրություն է դարձվել այդ խնդրի վրա, ինչը հետաքրքրել է նաև հաջորդ սերունդների գիտնականներին:

Արարատյան սեպագիր արձանագրությունների՝ հայերեն հիմքով աշխարհագրական անունները, դիցանունները , արքաների տիտղոսաշարը , բառապաշարը և հնագիտական համապատասխան նյութերը վկայում են, որ հազարամյակների խորքից եկող Հայոց պետականության, մշակույթի, քաղաքաշինության, ամրոցաշինության, դիցարանի և տնտեսության զարգացման կարևորագույն փուլն էր Արարատյան՝ Վանի թագավորությունը:

Բ. Հարությունյանը գրել է. «Հայ պատմաբանները բացարձակապես անպատրաստ եղան, երբ նրանց ապշահար հայացքի առջև բռնվեց, թափ առնելով, Ղարաբաղյան շարժումը» : Նա մոռանում է, որ հայ պատմա-

---

[13] Հայկական լեռնաշխարհին վերաբերող մ.թ.ա. X-VIII դդ. ասորեստանյան սեպագիր արձանագրությունները Ժ. Օպերտը թարգմանել և մեկնաբանել է Հայաստանի պատմության առումով (Oppert J., Expédition scientifique en Mésopotamie. Paris 1863, t. I, p. 337-340, 343, 345). Brosset, M., Sur l'histoire ancienne de l'Arménie, d'après les textes hiéroglyphiques et cunéiformes (Bulletin de l'Académie impériale des sciences de S.-Pétersbourg, 1871, t. 16, p. 332-340). Sandalgian J., Les inscriptions cunéiformes Urartiques. Venise, 1900, p. XVI; Գալամքյանան Մ., Արմէն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պէյրութ, 1973, էջ 185-260, Ջահուկյան Գ., Հայկական չերտը ուրարտական դիցարանում (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1986, N 1): ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը, «երկար տարիներ նվիրելով ուրարտական արձանագրությունների լեզվի ուսումնասիրությանը», եզրակացրել է, որ դրանց ներածական բանաձևերի «քառապաշարն ու քերականական կառուցվածքը հնարավոր է մեկնել հայերենով, այսինքն՝ այդ բանաձևերը համարել հայոց լեզվի առաջին գրավոր տեքստերը» (Ջահուկյան Գ., Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին (ՊԲՀ, 2000, N 1, էջ 124-129)): Իսկ բան. գիտ. դոկտոր Ա.Պետրոսյանը, առանց խորանալու խնդրի էության մեջ, գրում է, թե «ուրարտական արձանագրությունների լեզուն հայերեն չէ», այնուհետև «Հնդեվրոպական հայրենիքի» առումով գրել է. «Հայաստանից հեռու որևէ տեղագրում տեսականորեն չի բացառում հայերի լեզվական նախնիների Ք.ա. II հազ. կամ նույնիսկ ավելի վաղ հայկական լեռնաշխարհում լինելու հնարավորությունը: Մյուս կողմից, Հայաստանի մոտ որևէ տեղագրում տեսականորեն չի բացառում նախահայերի ինչ-որ տեղ դեգերելու և ավելի ուշ Հայաստան գալու հնարավորությունը»: Այսքանից հետո հեղինակը հայտարարում է «կիրառ-գիտական էքսկուրսիաներ ուսումնասիրություններ» են չրջանառում Հայաստանում» (Petrosyan A., The Problem of Identification of the Proto-Armenians: A Critical Review – Journal of the Society for Armenian Studies (այսուհետև՝ JSAS), vol. 16, 2007, p. 28-30, 36): Հիշելով «ուսումնասիրված էքսկուրսիոնացման» մասին Ա. Իսկանդարյանի և Բ. Հարությունյանի «դրույթը» կարելի է տեսնել, որ նրանց հոդվածի «գաղափարները» արդեն «պտուղներ» են տալիս:

Մեհերի դրան արձանագրությունում հիշատակվող Արթիրիդինի (Արթիվ) և Ջուկունի (Ջուվ) ասոմվածությունները (Արմուտիսի պայտամանքային կենտրոնով) մար մնավորում են երկնային և ջրային տարրերը՝ խորհրդանշելով հին հայկական Արթրունյաց տոհմի բնապաշտական տիեզերակարգը:

Մարբուր I թագավորը կրում էր «արքա մեծ», «արքա հզոր», «արքա Նաիրի երկրի», «արքա արքայից» տիտղոսները (Sandalgian J., նշվ. աշխ., էջ 2): «Ամոքային արքա» տիտղոսը հետագայում կրել է Տիգրան II Մեծը, ըստ Պատմահայր «Մեծն Տիգրան և յաղթող» (Մովսէս Խորենացի, էջ 70):

Արտաշես Բ., Историческая наука в Армении в 1988-1998 гг., с. 59 Մինչև այն ժամանակ, նույն հոդվածում (էջ 60-61) իր կողմից ներկայացված ժամանակագրությունում

գիտության, քարտեզագրության և մշակութաբանության ուշադրության կենտրոնում գտնվող Արցախի պատմության, աշխարհագրության և ճարտարապետության բնագավառներում տարիներ շարունակ հայ գիտնականների (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սուրեն Երեմյան, պատմ. գիտ. թեկնածու Սեզրակ Բարխուդարյան, մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակ, պատմ. գիտ. դոկտորներ Աստուր Մնացականյան, բանաստեղծ Ուլուբաբյան, բան. գիտ. դոկտոր Վարազ Առաքելյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյան, Արցախի մշակութային գործիչ Շահեն Սկրտչյան, պատմ. գիտ. թեկնածու Ալեքսան Հակոբյան և ուրիշ շատ հայագետներ) կատարած աշխատանքների շնորհիվ է հայ ազգի պատմական հիշողությունը վառ պահվել նաև XX դ. 60-80-ական թթ.: Հայ մտավորականները պետական համապատասխան մարմիններին բազմիցս ահազանգել են պատմագիտական հիմքով Արցախի խնդրի արդարացի լուծման մասին: Հայաստանի պատմական աշխարհագրությունը նենգափոխող Բաքվում հրատարակված պանթուրքիստական «քարտեզների» դեմ (արտատպվել էին 1944 թ. Թուրքիայում հրատարակված «Իպամ» հանրագիտարանից) 1987 թ. մայիսին բան. գիտ. դոկտոր Ալբերտ Մուշեղյանը Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտ ուղարկեց մի նամակ՝ բացահայտելով պատմական ճշմարտությունը: Կեղծարարներին դատապարտող նույն ինստիտուտի պաշտոնական պատասխանը՝՝ հրատարակվեց, որը վայնասուն առաջացրեց Բաքվում:

Ա. Իսկանդարյանի և Բ. Հարությունյանի հեղինակած հոդվածում գրված է. «Մինչև 1988 թ. պատմության երեք տարբերակներ գոյություն ունեին. «պաշտոնական», «ոփյուռքի» և «ժողովրդական»: Երեքն էլ չափազանց առասպելականացված էին, երեքն էլ կենտրոնում էին հայերի «հնության», «քաղաքակրթվածության» և «տառապյալության» վրա: Երեք տարբերակներն էլ տառապում էին էթնոկենտրոնացումով և «եղեռնի կոմպլեքսով»... Պատմությունը և պատմաբանները «կոչված» եղան օրինականացնելու ազգային պայքարը: Առաջին հերթին դա արտահայտվեց Հայոց պատմության «ղարաբաղացման» մեջ»[15]: Ահա այսպիսի ինքնաիարազանում:

հրատարակված՝ Արցախին նվիրված մի լարք աշխատությունների լարքում նա հիշատակել է Ե. Մնրտյանի գիրքը, որը հրատարակվել էր գրանցից առաջ 1985 թ. Ուրեմն նա պետք է տեղակ լիներ Արցախին նվիրված նաև այլ հեղինակների աշխատություններին և գործունեությանը:

Գրական թերթ, 14.VIII.1987: Ա. Մուշեղյանը 1989 թ. հիմավոր քննադատության ենթարկեց «աղրբեջանցի» կեղծ «պատմաբաններին» (Мутерян А., Псевдоисторическая литература и ее апологеты (Լրաբեր, 1989, N 8, էջ 16-33)):

[15] Искандарян А., Арутюнян Б., նշվ. աշխ., էջ 152-153: Նշված հոդվածուի խմբագիրներ Կ. Այսերմաները և Գ. Իորդյուգովան գրել են. «Պատմությունների ներկայիս «վերաշարադրմանը» բնորոշ են, նույնիսկ պատմաբան՝՝՝ների լրջանում... սեփական պետականությունը հնացնելը, էթնոսների քաղաքական և հասարակական զարգացման մակարդակի չափազանցումը, ընդհանուր առմամբ, ի հայիվ հարևանների ինքնահաստատումը: Իսկ հայաստանցի հետազոտողները (նկատի ունեն Ա. Իսկանդարյանին և Բ. Հարությունյանին - Դ. Է.) ընդհանրապես խոսում են իրենց ազգային պատմության «ղարաբաղացման» մասին (Национальные истории в советском и постсоветских государствах, с. 13):

2001 թ. լույս տեսած իր գրքում Բ. Հարությունյանը, նսեմացնելով Մովսես Խորենացու երկի սկզբնաղբյուրային՝ պատմագիտական նշանակությունը, գրել է. «Հարկ է խոստովանել, որ այսօրվա պատմաբանի համար չատ ավելի հաճելի է գործ ունենալ Գավստոս Բուզանդի երկի հետ..., քան թե Պատմահոր երկասիրության հետ, որի մեջ ամեն մի փաստը կամ իրադարձությունը կորցրել է սկզբնական իր անաղարտությունը, անցնելով հեղինակի վերլուծության և իմաստավորման խոհանոցով» [1]: Միևնույն ժամանակ, նա գրել է, որ այն «սոսկ հայ ժողովրդի համահավաք պատմության ստեղծման փորձ չէր, այլև հայ ազգային ազատագրական յարժման քաղաքական ծրագիր պետականությունը կորցրած հայ ժողովրդի համար, որը ծնվեց Սահակ Բագրատունու ուղեղում և միս ու արյուն ստացավ Պատմահոր կողմից»:

Հայոց թագավոր Պարույրին սկզբնական ծագում վերագրող որոշ հետազոտողների սխալ կարծիքին հետևելով, Բ. Հարությունյանը մի «հայտնագործություն» է արել՝ իբր նյուքար Մադեսը Պարույրի որդին էր, իսկ «Արամի պատերազմը Մադեսի դեմ տեղի է ունեցել, ըստ Պատմահոր տեղեկության, Հայոց աշխարհը Մադեսի կողմից գրավելուց երկու տարի անց»

Պարույրի մասին Պատմահայրը գրել է. «Պարույր՝ առաջին ի Հայս թագաւորէ...զմերս ասեմ Պարույր..., որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ դատաւի Վարրակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալայ...», «...դքաջն մեր նախարար յանգուցանէ Պարույր, թագաւորեցեալ չուք և ժև նմա խոստանալով...», «մեր առաջինի Վարրակայ մարէ պսակեալ Պարույր, որդի Սկայորդւոյ»

Այսպիսով, չընդունելով Մովսես Խորենացու հաղորդումները հայոց թագավոր Պարույրի մասին, Բ. Հարությունյանը նրան սկզբի է համարել,

---

[1] Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», Ե., 2001, էջ 39: Նրա համար սովորական է դարձել առանց որևէ գիտական էթիկայի պահպանման Մովսես Խորենացուն քննադատելը: Վերջերս նա գրել է. «Հավաստիությունից զուրկ է պատմահոր այն եզրակացությունը, թե իբր Լաբուքնայի հիշատակած Աբգարը Հայոց թագավոր է եղել...» [Հարությունյան Բ., Մբ. Թագեոս և Սբ. Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությունը Հայաստանում և նահատակությունը (Սուրբ Հայաստան, Ե., 2007, էջ 54)]: Աբգարի՝ Հայոց արքա լինելը հաստատում է նաև ասորական մի սկզբնաղբյուր. «Գանի որ Ուռհայում բնակություն հաստատած և հզորացած հայերը հավատարիմ էին մնացել Հունաց թագավորությանը, նրանց ազգից մեկին, որի անունն էր Աբգար, թագավոր հռչակեցին: Սա և իր սերունդները երեք հարյուր ութսուն տարի տիրեցին Ուռհային ու Մծբնային: Նրանցից յոթերը կոչվեցին Աբգար, առաջին թագավորի անունով... Այդ ժամանակներում եկավ և աշխարհում հայտնվեց Հրեաստանը, երբ Հռոմում տիրում էր Օգոստոս կայսրը: Իսկ Ուռհայում թագավորում էր այս Աբգարը...» (Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմ. բնագրից Լ. Տեր-Պետրոսյանի, Ե., 1982, էջ 195-196):

Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.), Ե., 1998, էջ 57-73, 80: Արամին մ.թ.ա. VII դարի հետ կապող, Պարույրին սկզբնական ծագում վերագրող և այդ առումով Հայոց պատմությունը աղավաղող Բ. Հարությունյանի «տեսություն» քննադատությունը տե՛ս Մուշեղյան Ա., «Արամ» տեսությունը Հայ ժողովրդի երկրորդ ցեղանուն (ՊԲՀ, 2007, N 1, էջ 232-246):

Մովսես Խորենացի, էջ 64, 65, 68:

իսկ Հայաստանը ասպատակած մարական (մեդացիների) զորքերը (որոնք «սմբակակոխ արարեալ զսահմանս Հայոց՝ ծառայեցոյց ամս երկուս») առաջնորդած Նյուքար Մադևին, այսինքն՝ հայերի թշնամուն, դարձրել է Պարույրի որդի. Այնինչ Պատմահայրը իր երկի տարբեր գլուխներում է շարադրել Նյուքար Մադեսի և Պարույրի հետ կապված իրադարձությունները , որոնք, ինչպես հետևում է հենց Պատմահոր շարադրանքից, իրար հետ ոչ մի կապ չունեն:

Արհեստական «մեղք» բարդելով սկզբնաղբյուրի վրա՝ Բ. Հարությունյանը գրել է. «... ինչ-ինչ պատճառներով, որի ակունքները հասնում են մինչև Մար-Արասի մատյանը, թե Պատմահոր սխալի հետևանքով Հայկյանների տոհմածառը բեկվում է և Արամին վերագրվում են դեպքեր և անցքեր, որոնք վերաբերում են Ն. Ք. VII դարին... Նյուքար Մադեսի դեմ պատերազմած Արամը, անտարակույս, VII դ. Ն. Ք. անձնավորություն է...» : Նման եզրահանգման նա եկել է անհիմն կերպով իրար կապակցելով տարաբնույթ տեղեկություններ: Նա գրել է, որ Թիգլաթպալասար I-ի դեպի «Կումանի (Կումենու) երկիրը կատարած» արշավանքը «II. Հմայակյանը իրավացիորեն առնչում է Հայկյանների Հայկական լեռնաշխարհ տեղափոխվելու ժամանակներին»[11]:

Այնինչ պատմ. գիտ. թեկնածու Ս. Հմայակյանի միակ «փաստարկն» է մ.թ.ա. 1110 թ. Թիգլաթպալասարի գրոհի ժամանակ Նիլուբի լեռներում գտնվող Կիրչա քաղաքի հետ կնքված պայմանավորվածության մի կետը, բստ որի՝ այն չէր ավերվի, եթե քաղաքից վտարվին երեք հարյուր այն ընտանիքները, որոնք չէին ցանկացել հնազանդվել «Աշուրին, արքայի տիրոջը»: «Այս երեք հարյուր ընտանիքները իսկապես դուրս են եկնում քաղաքից. Թիգլաթպալասարը ասում է, թե ընդունել է նրանց, սակայն այդ մարդկանց հետագա ճակատագրի մասին ոչինչ չի հայտնում... Մանագկերտի մոտ հայտնաբերված է Թիգլաթպալասարի մի արձանագրությունը, որտեղ պատմվում է նրա հայթարշավների մասին: Հայկ նահապետի մասին առասպելը և Թիգլաթպալասարի տարեգրության հիշատակված հատվածներն ունեն մի շարք ընդհանրություններ»[12]: Սակայն Հայկը ոչ թե երեք հարյուր ընտանիքներով է ներկայացված ավանդության մեջ, այլ «...որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեօհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցեալովք ի նա և բոլոր ազխիւ»[13] :

«Հայկի ու նրան հաջորդող վեց ներկայացուցիչների նահապետության կամ գահակալության շրջանն» «առաջարկելով ժամանակագրել Ն. Ք. XII-XI դարերով», Բ. Հարությունյանը, Հայկի հետ եղածների թիվը նույնիսկ հասցնելով 500-ի, զարմանալի տրամաբանությամբ գրել է, որ

---

[11] Նույն տեղում, էջ 44:

[12] Նույն տեղում, գիրք Ա, գլ. ԺԳ, ԻԱ, ԻԲ:

[13] Հարությունյան Բ., Թոզարամա երկիրը և Հայկյանները (Աստվածաշնչական Հայաստան (այսուհետև՝ ԱՀ), Ե., 2005, էջ 142):

Նույն տեղում, էջ 136:

Հմայակյան Ս., Հայկ Նահապետի մասին առասպելն ու Կիրչա քաղաքը Նիբուրի լեռներում (ՊԲՀ, 1992, N 1, էջ 127-128):

[14] Մովսես Խորենացի, էջ 33: Ս. Հմայակյանը (Հայկ Նահապետի մասին..., էջ 125) տեղյակ է այդ փաստին:

նրանք «կարող էին կազմել շուրջ 5000 մարդ, որից առնվազն 1500-ը գենք կրելու ընդունակ կլինեին: Հանդես գալով որպես առավել կազմակերպված ուժ, նրանք կարող էին իրենց ենթարկել այլևայլ հայկական ցեղերին: Համեմատության համար նշենք, որ Լեհական պետության Հանդես գալու շրջանում, որը Հայկյանների ժամանակներից բաժանում են քսաներկու դար, արքունի բանակը կազմում էր ընդամենը 5000 զինվոր կամ Օսմանյան կայսրության և Թուրքական ժողովրդի ձևավորման միջուկը կազմեցին Զալալ-ադ Դինի ղեկավարած բանակի 400-500 վրան կազմող զինվորներ, որոնք ծառայության անցան Ռկոնիայի սուլթանի մոտ, ստանալով մի աննշան բեյլիք Բուրսա քաղաքի մերձակայքում: Հայկյանների պետությունը, դատելով ավանդական պատմությունից, արդեն «Նինոսի» ժամանակների Ասորի օրոք ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և արևելյան շրջանները»[31]: Զարմանալ կարելի է, որ նման մտածողությամբ հեղինակը, որը Հայկյաններին ներկայացրել է որպես Հայկական լեռնաշխարհում ապրող «այլևայլ հայկական ցեղերին ենթակայացնող» գահակալների՞ և, միևնույն ժամանակ, Հայկին իր հետ եղած մարդկանցով համեմատել «Թուրքական ժողովրդի ձևավորման միջուկը» կազմած՝ «Զալալ-ադ Դինի ղեկավարած բանակի 400-500 վրան կազմող զինվորների» հետ, որոնք ծառայության համար ստացել էին «Բուրսա քաղաքի մերձակայքում» գտնվող մի «աննշան բեյլիք», հրաժարվում է վերոհիշյալ «Հայաստան. ազգային պատմության «դարաբաղացում» հոդվածի համահեղինակ «դափնինների» ոգուց»:

Ըստ Թիգլաթպալասարի արձանագրության, «300 ընտանիքների» «սկզբնակետը» Կիրյա քաղաքն է: Իսկ Հայկը իր գերդաստանով ոչ թե «Արարադ լեռն» է «լքում», ինչպես գտնում է Ս. Հայակյանը, այլ «... չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ...», ինչպես նշում է Մովսես Խորենացին՞: Ս. Հայակյանը գրել է, «Հայկի կերպարը համադրվում է Կումենուի և Առաջավոր Ասիայի շատ երկրներում այն ժամանակ լավ հայտնի Թեշուբի՝ ամպրոպային ու վիշապամարտ աստվածության հետ,

[31] Հարությունյան Բ., Թոզարամա երկիրը..., էջ 137-138: Հայագիտությանը անհարիր համեմատություններ կատարելիս Ռ. Հարությունյանը անտեղյակություն է ցուցաբերել ասատական փաստերի նկատմամբ: Խորեզմյան Մուհամմադի որդի Զալալ-ադ Դինը (Զալալեդդին) Զինգիզ խանից կրած պարտությունից հետո մի նոր «կարարություն» է ստեղծում: Մրցակցելով իր սեղջուկ-թուրք ախոյանների հետ՝ Զալալ-ադ Դինը սպատակում է Վրաստանի և Հայաստանի շրջանները, պարտվում Երզնկայում (1230 թ.) և հաջորդ տարի սպանվում. (The Cambridge Medieval History vol II. The Byzantine Empire. Cambridge. 1966, p 748): Զալալեդդինի դաման ասպատակությունների մասին կկարում են Վայոց ձորում և Գեղարքունիքում պահպանված վիմագիր արձանագրությունները (Գրիգորյան Գ., Հախվերդյան Ս., Մյուռնիքի պատմություն, Ե., 2001, էջ 89):

Նա հակասում է ինքն իրեն, քանի որ մինչ այդ գրել էր, որ Հայկյաններին «բախտ էր վիճակված մակարդի դեր կատարելու Հայկական լեռնաշխարհի բազմացեղ բնակչության համար, որի արդյունքում ձևավորվեց Հայ ժողովուրդը» (Հարությունյան Ռ. Թոզարամա երկիրը..., էջ 135):

Ըստ Մովսես Խորենացու երկի (էջ 33) մի ձեռագրի տարբերակներում՝ «Արարատայ»:

համադրվում են, սակայն չեն նույնանում»[31]: Սակայն վիշապամարտ աստվածությունը ոչ մի կերպ՝ թեկուզ և չնույնանալով, չի համադրվում Հայկին՝՝, այլ, ոստ Սովսես Խորենացու, Վահագնի նկարագրին է համապատասխանում. «Եթե որոյ և ընդ վիշապաց ասէին յերգին կռուել նմա և յաղթել»

Ս. Հմայակյանը, «Հայկ նահապետի մասին առասպելը» ժամանակագրելով Թիգլաթպալասար I-ի հաղթարշավների ժամանակով, փաստորեն, «երիտասարդացրել» է Հայկ նահապետի ավանդության պատմական ժամանակը: Նրա հոդվածում աղավաղվել է նաև Հայք-Հայասայի էթնիկական պատմությունը: Ըստ հետազոտողի, «արևելյան մուչկերը, ըստ երևույթին, դուրս գալով Հայասա-Ազիի տարածքից, մ.թ.ա. 1165 թ. գրավում են Ալշի և Պուրուլումշի երկրները, իսկ 1115 թ. մտնում են Ասորեստանի ենթակա Կադմուխի իշխանության տարածքը», այնուհետև այնտեղ կովող մուչկերը (որոնք, ինչպես Ս. Հմայակյանն է նշում առանց որևէ գիտական հիմքի, «այժմ. դիտվում. են որպես լեռնաշխարհի բնիկ ու Հայախոս ժողովուրդներից մեկը»)[32] պարտությունից հետո անցել են

[31] Հմայակյան Ս., Հայկ նահապետի մասին..., էջ 127-128:

Ա. Հմայակյանը, հավատ չընծայելով իր իսկ առաջադրած վարկածին, «օգնության» է կանչում «հարևաններին՝ «Արդյո՞ք նույնանում են Թեյուբն ու Հայկը... կարծում եմ հայերը Հայկին երբեք չեն անվանել Թեյուբ կամ Թեյլեբա. սակայն այդ կարող էին անել հարևանները. Հայկին կոչելով ավելի հանրահայտ Թեյուբի անունով» (Հմայակյան Ս., Հայկ նահապետի մասին..., էջ 127-128): Ավելին, «Թեյլեբա աստծո գործքեր» արտահայտությանը նմանություն փնտրելով նա գրել է. «Աստվածաշնչում Եհովայի գործքեր ասելով նկատի են առնվում «Իսրայելի որդիները», այսինքն բոլոր նրանք, ովքեր պաշտում են Եհովային» (Հմայակյան Ս. Գ., Վահի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 29): Իսկ Բ. Հարությունյանը մեկ այլ առիթով, անդրադառնալով Արամի մասին հաղորդումներին, գրել է. «Եզեկիել մարգարեն կարող էր Եհովայի անունից Գոգին սպառնալիք ուղղել ի նկատի ունենալով այս թարմ և նոր ուժը» (Հարությունյան Բ., Թոգարամա երկիրը..., էջ 144): Պետք է հիշել, որ Հին կտակարանի հունարեն Թարգմանությունից (The Septuagint Version of the Old Testament, with an English transl., Michigan 1970), ինչպես նաև հայերեն գրաբար թարգմանություններում հրեական պանթեոնի ամպրոպի և կայծակի աստվածության՝ Ցաքմեի (Bauer H., Leander P., Historische Grammatik der hebräischen Sprache, I, Halle, 1922, s 24) (Եհովա) անունը ընդհանրապես չի հիշատակված: Աստծո անվան աստվածաշնչյան բանաձևն է. «Ես եմ Աստուած, որ էն» (Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Կոստանդնուպոլիս, 1895, Գ. 14):

[32] Մովսէս Խորենացի, էջ 86:

Հմայակյանը հիշատակել է պատմ. գիտ. դոկտորներ ա. Քոսյանի և Ի. Դյակոնովի աշխատությունները, սակայն Ա. Քոսյանը գրել է. «Գուցե թրակացի մուչկերի և հայաբերու ուրուանեցիների համատեղ բնակության հանգամանքն է հիմք նախադրյալ ավելի ուշ շրջանի հուշ հեղինակների համար գրելու հայերի և փոյուքիացիների միջև լեզվական և կենցաղային նմանությունների մասին» (Քոսյան Ա., էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. XII դարում (ՊԲՀ, 1991, N 1, էջ 77)), ինչպես նաև նշել է. «Կադմուխի հասած մուչկերի հետնորդներն այստեղ առկա էին դեռևս մ.թ.ա. IX դարում» (նույնի՝ Աստվածաշունչը և Հայոց ազգածագման խնդիրը Խորենացու «Հայոց պատմության» մեջ (ԱՀ, էջ 149)): Իսկ Ի. Դյակոնովն այն կարծիքին էր, որ «ելնելով նախահայկական ցեղերը ոչ մի դեպքում չպետք է չփոթել հայ ժողովրդի հետ... Ըստ երևույթին հենց այս նախահայկական ցեղերին աստուրական աղբյուրները կոչում են «մուչկեր» տերմինով, մենք նրանց կկոչենք արևելյան մուչկեր... նույն տերմինով (ավելի ուշ հունարեն փոխանցմամբ՝

ապստամբ Կումենու՝ «Թեյշեբա և Խուբա խուռիական աստվածությունների պաշտամունքի» երկիրը : Ս. Հմայակյանը կարող էր որոշակի եզրահանգման գալ՝ Վան-«Ուրարտու» թագավորության՝ հայկական պետություն լինելու փաստի կապակցությամբ, եթե հստակեցներ և խորացներ իր իսկ արտահայտած դրույթը. թե «բիայնական պետության կազմում ընդգրկված գավառների բնակչության մի նշանակալից մասը մ.թ.ա. IX դարում արդեն ուներ հնդեվրոպական ու հայկական ծագում» : Առավել ևս, եթե նկատի ունենանք, որ դիցարանի խնդրում նա զգալի աշխատանք է կատարել հայկական անվանումների մասին տեղեկությունները ի մի բերելիս՝ Սակայն, Ս. Հմայակյանը մուշկերին ենթադրաբար «Հայախոս ժողովուրդներից մեկը» համարելով և կապելով «Հայկ նահապետի առասպելի հետ», նրանց բերել է «խուռիարնակ» Կումենու, որի համար հիշատակված «երեք հարյուր ընտանիքները» «անհարազատ տարբ են եղել», որոնք այնուհետև փոալվում են այնտեղից : Այսպիսի խառնածին ենթադրություններով ազավաղվում է Հայոց պատմությունը:

Ըստ Ս. Հմայակյանի՝ «Ուրարտական ժամանակաշրջանի և իրականության ուժեղ ազդեցություն է դիտվում Մովսես Խորենացու և Սեբեոսի մոտ վկայված Հայկ նահապետի մասին առասպելում» , որը նա դիտում է «ուրարտական պետության կազմում ընդգրկված տարբեր ժողովուրդների էթնիկական պատկանելիության որոշման» և «Հայ ժողովրդի կազմավորման ընթացքի և ավարտի հետ կապված որոշ հարցերի լուսաբանման» առումով[70]: Դրանով իսկ հետազոտողը Գ. Ջահուկյանի նշած մի շարք դիցանունների՝ հայերենով ստուգաբանվելու (Արծիրեղինի՝ արծիվ, Արդի՝ արդ, կարգ, Մինուխարդի՝ ծին, Ալափթուլինի՝ աղաւթ, Թառանինի՝ քառ, Ջիուկուսի՝ ծուկն, Տուբանի՝ ստուրք և այլն) և հայկական ծագում ունենալու մասին տեսակետը, որն ինքը ընդունել է՝՝, խորացնելու փոխարեն հեռացնում է այն էթնոլեզվական հիմքից, որը նկատի ունենալով Գ. Ջահուկյանը վաղնջահայերենի գոյությունը համարել է «մ.թ.ա. III հազարամյակի սկզբից մինչև մ.թ.ա. XIII դարը»

«մոխիր») կոչվում էր արևմտավրացական ցեղերի մի մասը, որոնք նույնպես մասնակցում էին մ.թ.ա. II հազ. վերջի և I հազ. սկզբի էթնիկական տեղաշարժերին» [Дьяконов И. М., Янковская Н. Б., Арутюнов В. Г., *Северная периферия малоазиатского культурного мира (II-I тыс. до н.э.)* (*История древнего Востока*, ч. II, М., 1983, с. 106-107)]

[69] Հմայակյան Ս., Հայկ նահապետի մասին..., էջ 130:

[70] Նույն տեղում:

[71] Նույն տեղում:

[72] Հայկի մասին ավանդությունը պահպանվել է Սեբեոսի «Պատմության» հեռ. հրատարակվող Անանունի (Ա-Զ գլուխներ) հատվածում (Ա գլուխ՝ Պատմութիւն Սեբէոսի, Ե., 1979, էջ 48-50):

[73] Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, էջ 12:

[74] Նույն տեղում, էջ 9:

[75] Նույն տեղում, էջ 19-20:

[76] Ջահուկյան Գ. Պ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 25: Գիտնականը այնուհետև նշել է. «Օտարազգի և հայ գիտնականների մեջ երկար ժամանակ տարածված է եղել այն կարծիքը, թե հայ էթնոանուն կրոնը ձևավորվել է իրականի հիման վրա, ներկայացրել վերջինիս ասանցյալը: Այս կարծիքը կորցրեց իր հիմքերը լեզվաբանության, պատմագիտության, ազգագրության,

Իր «տեսությունը» հիմնավորելու համար Ս. Հմայակյանը միմյանց է նմանեցրել, մի կողմից, Հայկի մասին Մովսես Խորենացու նկարագրած և, մյուս կողմից՝ մ.թ.ա. XII դ. տիրող քաղաքական ու էթնիկական իրավիճակները: Մինչ Թիգլաթպալասարը լռում է «300 ընտանիքների» հետագա ճանապարհի խնդրում, Ս. Հմայակյանը նրանց համար «նահանջի» ճանապարհ է «գտնում» Վանա լճից հյուսիս: Այնինչ, ըստ Մովսես Խորենացու պահպանած ավանդության, Հայկը Հայոց ձորում հաղթել և սպանել է իր երկիրը հսկայական զորքով ներխուժած Թյնամու հրամանատարին՝ Բելին[16]: Իսկ, ըստ Ս. Հմայակյանի, Վանա լճի ավազանի իշխանությունների զորքերին միացած «գաղթողների» 300 ընտանիքների և ասորեստանյան զորքի միջև եղած ճակատամարտում, այդ ընտանիքների դրսևորած անկուն կամքի և ազատասիրության մասին երգեր են հյուսվել, որոնք այնուհետև միաձուլվել են Հայկ Նահապետի մասին առասպելին: Բայց չէ՞ որ Թյնամու հրամանատար Թիգլաթպալասարը, փոխարքություն Բելի, ոչ միայն ողջ էր մնացել, այլև իր հաղթարշավների մասին արձանագրություն է թողել[17]: Իսկ Բ. Հարությունյանը, բացարձակապես ազամաղելով Հայկի և Բելի կռվի մասին ավանդությունը, գրել է. «300 ընտանիքները, որոնք, մեր կարծիքով, եւ նույնանում են Հայկյաններին, ստիպված եղան ժամանակավորապես հնազանդվել Թիգլաթպալասար I-ին և ծառայության անցնել նրա մոտ»[18]:

Ս. Հմայակյանը գտնում է, որ «Հայկ Նահապետի մասին առասպելն» արտացոլում է «մուչկերի»՝ «Հայախոս ժողովուրդներից մեկի» մասին պատկերացումները, և Հայկի ու նրա հետ եղած «երեք հարյուր ընտանիքների» տեղաշարժի ժամանակաշրջանի ամենից վաղ սահմանը համարում է մ.թ.ա. 1110 թ.: Հայոց էթնիկական պատմության նման ուղեղատմամբ Հայկի մասին ավանդության ակունքները կտրվում են մ.թ.ա. III հազարամյակից:

կրոնագիտության նոր նվաճումների լույսի տակ» (Ջահուկյան Գ. Բ., Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին (ՊԲՀ, 1992, N 1, էջ 143)): Իսկ պատմ. գիտ. դոկտոր Կ. Ցուզբաշյանը գրել է. «Հայկական քաղաքակրթությունը ձևաւորուել էր մշակութային մի ոլորտում, որը պայմանականօրէն անուանում ենք իրանական: Դարեր անընդհատ այստեղ տիրում էր զրադաշտության ձեւերից մէկը» (Ցուզբաշեան Կ., Հայագիտության ներածություն: Ուսումնական ձեռնարկ, Ե., 2006, էջ 12): Անհրաժեշտ է հիշել, որ Դոմ Կալմեն, Դեյվիդ Լանգը և ուրիշներ նշել են, որ Հայաստանը քաղաքակրթության բնօրրանն է (Calmet (Rev. Père Dom Augustin, 1672-1757) in Dictionnaire de la Bible-Paris: Aux Ateliers Catholiques du Pont Montrouge, 1846, p. 162 (տե՛ս Leonian R., Les Arméniens de France sont-ils assimilés?, Issy-les-Moulineaux, 1986), David M. Lang: Armenia Cradle of Civilization, London, 1970, p. 9 և այլն):

[16] Մովսես Խորենացի, էջ 36-37:

[17] Ս. Հմայակյանը նախ գրել է, որ Թիգլաթպալասարի հաղթարշավների մասին մի արձանագրություն է հայտնաբերվել Վանա լճից հյուսիս՝ Մանազկերտի մոտ, այնուհետև նշել է, որ այդ արձանագրությունը գտնվում է Լաբգում: Իսկ հայտնի է, որ Մանազկերտը Ապահունիք գավառում է («Այլ և գնախարարութիւնն Ապահունեաց և գմանուագեանն և Բզնունեանն ի նոյն գաւակացն Հայկայ...». Մովսես Խորենացի, էջ 116), որին Հարթ սահմանակից է արևմուտքից (Երնջյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Ե., 1963, էջ 36, 62, 108):

[18] Հարությունյան Բ., Թոգարամա երկիրը..., էջ 135:

Բ. Հարությունյանը, անվերապահորեն ընդունելով Ս. Հմայակյանի տեսակետը[47], ժխտել է թե՛ Ղևոնդ Ալիշանի առաջարկած Ք. ա. 2492 թվականը[48] և թե՛ Միքայել Չամչյանի նշած Հայկազունների ժամանակագրությունը[49] և, կրկին խախտելով դիտական էթիկան, վերջինս համարել է «մտային վարժանքի արդյունք»: Նա գրել է, որ Ղ. Ալիշանը «փորձեց գտնել հայկական տոմարի սկզբնավորման տարեթիվը, կապելով այն Հայկի և Բելի կռվի հետ: Եվ քանի որ Ն. Ք. 428 թ. Նավասարդի 1-ը համապատասխանում էր օգոստոսի 11-ին, նա շարժական տոմարի 1460 տարի ընդգրկող 2 պտուտաշրջան վերադրելով Հայկյանների Հայկական լեռնաշխարհում հաստատվելուն, հայոց տոմարի սկիզբը համարեց Ն. Ք. 2492 թիվը... Սակայն մեր ուսումնասիրությունները, խարխլված հնագույն տեղեկությունների վրա, որոնց ստորև կանդրադառնանք, բացառում են շարժական տոմարի 2 պտույտի հնարավորությունը, ուստի հայոց բուն թվականը պետք է սկսվեր ոչ թե Ն. Ք. 2492 թ., այլ 1032 թվականին...: Մեր ուսումնասիրությունները ենթադրել են տալիս, որ տոմարի սկիզբը՝ Ն. Ք. 1032 թ. օգոստոսի 11-ը եղել է Հայկյանների կողմից Հայկական լեռնաշխարհում պետության ստեղծման կամ, որ ավելի հիշտ է, թագավորության հռչակման թվականը...» : Մ.թ.ա. XII-IX դդ. նա համարել է «Հայկի և նրան հաջորդող վեց ներկայացուցիչների նահապետության կամ գահակալության» շրջանը: Այնուհետև ավելացրել է, որ «Հայկյանների ծնունդ առած պետության մայրաքաղաքի... Արմավիրի հիմնադրումը և Արամայիսի թագավոր հռչակվելը պետք է տեղի ունենար Ն. Ք. 1032 թ. օգոստոսի 11-ին, որը դառնալու էր Հայկական տոմարի սկիզբը» :

Բ. Հարությունյանի խմբագրությամբ հրատարակված 6-րդ դասարանի դասագրքի առաջին բաժնի՝ «Հայ ժողովրդի կազմավորման սկիզբը» վերտառությունը կրող 3-րդ թեմայի՝ «Հայկյանների Այրարատյան թագավորությունը» ենթագլխում ասվում է. «Հայկական լեռնաշխարհի հնագույն միասնական հայկական պետությունը եղել է Այրարատյան թագավորությունը: Տոմարագիտական հաշիվները ցույց են տալիս, որ վաղ համահայկական թագավորությունը ծնունդ է առնում Արամայիսի

---

[47] Իսկ Գրիգոր Բրուտյանը նշել է, որ այդպիսի մոտեցմամբ Հայկի պատմությունը «կարելի չէ բավարար և ընդունելի համարել» (Բրուտյան Գր., Օրացույց Հայոց. Ե., 1997, էջ 366):

[48] «Հայկայ շրջանի» պարբերականության վրա հիմնված՝ Ղ. Ալիշանն տոմարագիտական Հայվարքի համաձայն, «յամի 2492 Քրիստոսի առաջ» Հայկ Նահապետը «մտաւ Այրարատ աշխարհքը օգոստոսի 11-23ին և հրամայեց, որ նոյն օրը տարւոյն սկիզբն սեպուի... Այս է ահա մեր մէջը սգոստոսի 11ին տօնին պատճառն»: «Հայկայ գարձէն քիչ տարի վերջը» տեղի ունեցավ Բելի պարտությունը և սպանվելը (Ղևոնդ Ալիշան, ուսուցիկս հայրենեաց Հայոց, Հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 94-95): Քննելով սկզբնաղբյուրները և տոմարագիտական գրականությունը՝ Գր. Բրուտյանը եզրակացրել է. «Հայոց Բուն Հայկյան (արեգակնային) օրացույցը սկզբնավորվել է Ն.Ք. 2341 թ.» (Բրուտյան Գր., նշվ. աշխ., էջ 19, 238-246): Այսպիսով. խոսքը կրկին մ.թ.ա. III հազարամյակի մասին է:

[49] Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, Ե., 1985, էջ 51-79:

[50] Հարությունյան Թ., Թոգարամա երկիրը..., էջ 135-136:

[51] Նույն տեղում. էջ 137:

օրոք Ք.ա. 1032 թ., երբ հիմնադրվում է Արմավիր քաղաքը: Նրա հաջորդների օրոք Հայկյանների թագավորության մեջ են ներառնվում Ներիակը և նրա շրջակա գավառները, Գուգարքը կամ նրա մի մասը, Այուանիքը, Արցախը և Ուտիքը : Հայկյանների վերջին ներկայացուցիչն էր Արամե-Արամը: Հարկ է նշել, որ Վանի թագավորները երբեք իրենց պետությունը չեն կոչել Ուրարտու, որը հանդիպում է միայն ասորեստանյան թագավորների թողած արձանագրություններում: Ասորեստանցիները հայկական թագավորության անունը Ուրարտու ձևով, որ նույնական է Այրարատին և Աստվածաշնչի Արարատին, պարզապես տարածեցին Հայկական լեռնաշխարհում նոր ծնունդ առած Վանի թագավորության վրա: Հայկյանների շնորհիվ կազմավորված ժողովուրդն իրեն կոչում էր «Հայ» կամ Թորգոմի ազգ... Երբ Վանի թագավորության անկումից հետո Հայկյանները վերականգնեցին իրենց իշխանությունը, պետությունը կոչվեց նախկինի պես Այրարատյան թագավորություն... Այն արդեն կազմավորված հայ ժողովրդի հայրենիքն էր» : Ուսուցչի և աշակերտի մեջ բնականից հարց կծագի, եթե նախքան Վանի թագավորության շրջանը «կազմավորված ժողովուրդն իրեն կոչում էր «Հայ», ապա արդյո՞ք միայն «հայկական թագավորության»՝ «Ուրարտու ձևով անունն են» ասորեստանցիները «տարածել» Վանի թագավորության վրա, թե՞ վերջինս նույնպես հայկական թագավորություն էր, քանզի ինչպե՞ս էր, որ Վանի թագավորության անկումից հետո «Այրարատյան թագավորությունը» դարձավ «արդեն կազմավորված հայ ժողովրդի հայրենիքը»: Իսկ մինչ Վանի թագավորությունը նշված «Այրարատյան թագավորությունը» «իրեն «Հայ» կոչող կազմավորված ժողովրդի» հայրենիքը չէ՞ր: Այսպիսի խառնաշփոթի «զարտնիքը» բացահայտվում է 5-րդ թեմայում, որի՝ «Հայ ժողովրդի կազմավորման ավարտը» վերտառությունը կրող պարբերությունում գրված է. «Հայ ժողովրդի կազմավորումը, որ ակտիվացել էր Ք.ա. II հազարամյակի վերջերին, բուռն ընթացել Վանի թագավորության շրջանում, Երվանդականների թագավորության օրոք թևակոխեց իր ավարտական փուլը... և երկրի ամբողջ բնակչությունը դարձավ հայախոս»[51]: Այսպիսով, լատ դասագրքում մատուցվող «տեսության», մ.թ.ա. 1032 թ. «ծնունդ է առնում» «վաղ համահայկական թագավորությունը», և մինչ Վանի թագավորությունը «միասնական հայկական պետության» մեջ «կազմավորված ժողովուրդն» «իրեն կոչում էր «Հայ», սակայն հայ ժողովրդի կազմավորումը

[51] Այստեղ հակասություն կա, քանզի, Ք.ա. 1032 թ. առումով խոսվում է «վաղ համահայկական թագավորության» «ծնունդ առնելու» մասին, սակայն, ըստ այդ տեսակետի, միայն հետո՝ Արամայիսի «հաջորդների օրոք Հայկյանների թագավորության մեջ» են «ներառնվում Ներիակը և նրա շրջակա գավառները, Գուգարքը կամ նրա մի մասը, Այուանիքը, Արցախը և Ուտիքը»: Հայկյանների ավանդության լույսի տակ «համահայկական թագավորության», այսինքն՝ հայկական պետականության մասին գրելիս անհրաժեշտ է հիմնավորապես հայվի առնել մ.թ.ա. III-II հազարամյակների Հայկական լեռնաշխարհի հնագիտական մշակույթի ամբողջական պատկերը:

Հայոց պատմություն, Հնագույն և հին շրջան (6-րդ դասարանի համար), խմբ.՝ ՀՀ ԳԱԱ Պոլիակից անդամ Բ. Լ. Հարությունյանի, Ե., 2007, էջ 40:

[52] Նույն տեղում, էջ 62-63:

«թևակոխեց իր ավարտական փուլը» Երվանդականների թագավորության որոշ, այսինքն՝ մ.թ.ա. VI դարում: Կարելի է տեսնել, որ Հայկյանների տոհմաբանության «երիտասարդացմանը» տուրք տվող Բ. Հարությունյանի խմբագրությամբ «Հայոց պատմության» դասագրքում մատուցվում է «գերքննադատությունից» ժառանգված «Հայ ժողովրդի կազմավորման փուլային տեսության» տարբերակը:

Հայկի և Հայկյանների՝ ներառյալ Արամի տոհմաբանությանը նվիրված ավանդության «երիտասարդացումը» հանգեցնում է Հայոց էթնիկական և պետականության պատմության խեղաթյուրմանը: Այնինչ Մովսես Խորենացին գրում է. «Արամայիս չինէ իւր տուն բնակութեան... և անուանէ զնա յոր անուն Արմաւիր... եւ զորդի իւր զՇարայ...առաքէ ամենայն աշխիւ իւրով ի դաշտ մի մծատոր... յորոյ անուն և զգաւառն ասես անուանեալ Շիրակ... Այս Արամայիս կեցեալ ամս՝ ծնանի զորդի իւր զԱմասիա. ի վերայ որոյ կեցեալ և այլ ևս ամս՝ մնաւ»[36]: Մովսես Խորենացու՝ Հայկյանների մասին ավանդությունն արտացոլում է Հայոց ազգաբանության հետ կապված երևույթների պատկերը: Հայկյանների ավանդությունը, հատկապես Արամայիսի շինարարական գործունեության մասին տեղեկությունը, մ.թ.ա. III հազարամյակի առումով արտացոլում է Արարատյան դաշտի հնագիտական պեղումներից հայտնի վաղ բրոնզեդարյան քաղաքային մշակույթի իրողությունը:

Հայկյանների կողմից պետության ստեղծման ժամանակաշրջանը համարելով մ.թ.ա. XI դ. երկրորդ կեսը՝ Բ. Հարությունյանն անտեսում է Հայոց բնօրրանում Հայկական լեռնաշխարհում Շենգավիթի, Մեծամորի, Թռեղքի, Լոռի բերդի, Լճաշենի, Վերին Նավերի, Բարձր Հայքի, Արածանիի հովտի, Վանի և այլ վայրերի՝ հնագիտական հուշարձաններով վկայվող, պետականության հունով ընթացած մշակութային շարունակականությունը (մ.թ.ա. III-I հազ. առաջին կես), որը համապատասխանում էր հին աշխարհի սեպագիր հուշարձաններում հիշատակվող Արատտայի (Արարատ)[37], Արմանումի, Հայասայի[38], Նաիրիի, Արարատյան (Ուրուատրի-Ուրարտու)՝ հայկական պետականության զարգացման փուլերը: Դրանով իսկ, հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհի բնիկ հայ ազգի Հայկյանների գլխավորությամբ զարգացող պետականությունը մ.թ.ա. VI-III դարերում ներկայացված էր Հայկազուն-Երվանդյանների թագավորությամբ: Պատմահայրը նշել է՝ «Որուանդ՝ առաջինն է, սակաւակեցաւն, որ ի Հայկազանց»

Բ. Հարությունյանը գրել է. «Մենք միանում ենք հայագետների և կովկասագետների այն խմբին, որոնք Արամին նույնացնում են ասորեստան-

---

[36] Մովսես Խորենացի, էջ 39:

[35] Պետրոսյան Լ. Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ, Ա (Հայ ազգագրություն և բանահյուսություն, Ե. Ե., 1974, էջ 112-123), Kavookjan M. The Distinguishing Characteristics of Armenian Architecture (The Horizon weekly of Montreal, Oct. 18 and 25, 1983). նույնի՝ Armenian Subartu and Sumer The Indo-European Homeland and Ancient Mesopotamia. Montreal, 1987, p 68-70. Սոմխիսյան Ա. Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Ե., 1992, էջ 29-32.

[36] Капанцян Гр., Хайасы — колыбель армян (Историко-лингвистические работы. К начальной истории армян. Древняя Малая Азия, Е., 1956).

[37] Մովսես Խորենացի, էջ 199:

յան արձանագրությունների ուրարտական կոչված Արամե կամ Արամու Թագավորին (մոտավորապես Ն. Ք. 859-843)· Հետևաբար Հայկի գերդաստանի Կումանիից դեպի Հայկական լեռնաշխարհ շարժվելու և Արամեի գահակալության վերջի միջև ընկած ժամանակաշրջանը կազմում է 265-266 տարի» : Բ. Հարությունյանը անհիմն կերպով՝՝ մերժել է Ղ. Ալիշանի տոմարական հաշվարկը, որի հիմքում է մ.թ. 428 թվականը, այլ ոչ թե Բ. Հարությունյանի նշած՝ «Ն. Ք. 428 թ.», ինչն, իհարկե, վերջինիս սխալ արդյունքի է հանգեցրել: Ր դեպ, ըստ Ս. Հմայակյանի, «Կումենուն տեղադրվում է Տիգրիս գետի ափին, դրա վտակի՝ Արևելյան Խարուրի հովտում... Երկրի մայրաքաղաքն էր Կիբչա բերդավանը, որը գտնվում էր Նիբուրի լեռներում... Նիբուրի լեռները ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում բաժանված էին Հայկական լեռնաշխարհի հինգ իշխանությունների միջև» : Բ. Հարությունյանը, «Հետևելով» Ս. Հմայակյանի կարծքին (որի բաղադրատարրը Կումենուի տեղադրությունն է), միևնույն ժամանակ աղավաղել է դրա պատմաաշխարհագրական հիմքը, քանի որ. Կումենու-Կումանին՝՝ հիշատակել է Հայկական լեռնաշխարհից դուրս:

Հայ ժողովրդի պատմության էթնիկական հիմքը աղավաղված է ներկայացված նաև Ռ. Հյուբնի «Հայաստան. պատմական ատլաս»-ում : «Դերքենադատության» «հետքը» այդտեղ հետևյալ կերպ է ներ-

---

[58] Հարությունյան Բ., Թոգարամա երկիրը..., էջ 137: Հակառակ այսպիսի կարծիքի, Գ. Մարգայարը գրել է, որ «Արրամու Ուրարտացու» ժամանակից Հայկյանների վեցերորդ սերնդի ներկայացուցիչ Արամին «բաժանում է չուրջ 25 սերունդ՝ գրեթե մեկ հազարամյակ... արդյո՞ք... Արամն իսկապես Հայկական հնագույն աստվածների թվին չի պատկանում՝ Հայկի և Արայի հետ միասին»: Դրանով իսկ, գիտնականը Արայի ծագման մասին գրել է, որ այն «կարելի է թվագրել Հայերի՝ Հեղեվրոպական ընդհանրությունից անջատվելու, նույնիսկ դեռևս նրա մեջ ընդգրկված լինելու ժամանակով: Շամիրամի կերպարը հետագայում եկել-միահյուսվել է Արայի առասպելին: Նմանօրինակ պատկեր է ներկայացնում նաև Հայկի ու Ռեյի առասպելը: Հայկը, Հայերի առասպելական անվանադիրը, Արայի նման, Հայերի հնագույն աստվածներից մեկն է, նա նույնքան հին է, որքան, «Հայ» ցեղանունը, որից և ծագել է «Հայկ» անունը» (Սարգսյան Գ. Խ., Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (ՊՊՀ, N 2-3, 1992, էջ 33)): Ըստ պատմահամեմատական լեզվաբանության, Հեղեվրոպական ընդհանրության գոյության և նրանից անջատված հունա-հայկական-արիական միասնության տրոհման ժամանակաշրջանները համապատասխանել են մ.թ.ա. V-III հազարամյակներին (Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 863, 865, 898).

Բ. Հարությունյանն իր վերոհիշյալ «խոստումը՝՝ անդրադառնալ «հնագույն տեղեկություններին», բացի խառնաչփոթ ստեղծելուց, այդպես էլ Նյութ հոդվածում չկատարեց:

[59] Հմայակյան Ս., Հայկ նահապետի մասին..., էջ 125:

[61] Հարությունյան Բ., Թոգարամա երկիրը..., էջ 137: Հետազոտողները Մեծ Զաբ գետի վերին հոսանքի և Արևելյան Խարուրի աջափնյա շրջանի միջև գտնվող խնդրո առարկա Կումմե-Կումենի-Կումանին տարբերում են Կիլիկյան Տավրոսի լեռներում գտնվող Կամմանու (Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту — Вестник древней истории (այսուհետև՝ ՎԴԻ), 1951, N 2, N 46 (176), с. 318, 320, որտեղ 50)· Կումմիա-Կումանիից (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, ե., 1971, էջ 187, Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, էջ 42):

[62] Hewsen R. H., Armenia: A Historical Atlas, Chicago and London, 2001. Բ. Հարությունյանի անունը նշված է սույն գրքի խորհրդատուների ցուցակում (նույն տեղում, էջ XV).

կայանում. «...Որքանով կարող է որոշվել, մոտ Ք. ա. 3000-ին նախահայկական ցեղերի նախնիները դեռևս կապված էին Սև ծովից հյուսիս գտնվող հնդեվրոպերեն խոսողների հիմնական զանգվածի հետ: Հաջորդ երկու հազարամյակների ընթացքում. այնուամենայնիվ. մեծ թվով ազգակից ցեղեր անջատվեցին հիմնական զանգվածից և սկսեցին գաղթը Բալկաններ: Այստեղ ցեղերի մի խումբը, որը մենք կարող ենք անվանել նախահույներ, հաստատվեց այն տեղում. որը պետք է դառնար նրանց հունական հայրենիքը. իսկ նրանց մնացած մասը, անցնելով Փոքր Ասիա, շարժվեց դեպի արևմտյան կենտրոնական Անատոլիա: Ասուրական արձանագրությունները հաղորդում են մուշկերի ներխուժման մասին... Նախահայերը... իրենց գաղթի ժամանակ հավանաբար խառնվել էին խեթալուվիացիների և ավելի ուշ՝ հուրրի-ուրարտացիների հետ...»: Այնուհետև Ռ. Լյուսենը անդրադարձել է ակադեմիկոսներ Թ. Դամկրելիձեի և Վյաչ. Իվանովի՝ «Հնդեվրոպական նախահայրենիքի» տեսությանը և. նշելով. որ այն ունեցավ իր հետևորդները և հակառակորդները. գրել է. որ Հայաստան լեռնաշխարհում «Նաիրյան ժամանակաշրջանի վերջում... մի նոր իշխանություն հայտնվեց Հայկական սարահարթում (plateau), որը ձուլեց Նաիրյան պետությունները մեկ դաշնության մեջ՝ Բիայնլիի թագավորների գլխավորությամբ: Այս դաշնությունը, որը պատմության մեջ հայտնի է որպես Ուրարտու. լեռնաշխարհի (highlands) ժողովուրդների միավորելու առաջին այդպիսի ձեռնարկումն էր: Հայաստանի թագավորությունը լինելու էր երկրորդը» : Կարելի է տեսնել, որ այս տողերի հեղինակը անվեհերապահորեն տուրք է տվել հայերի «եկվորության» և հայ ժողովրդի ու հայկական պետականության՝ «Ուրարտուից» հետո կազմավորման

---

[69] Նույն տեղում. էջ 24: Ըստ Ջ. Գրեպպինի, «կենտրոնական Անատոլիան» «հնդեվրոպական բնակչության կենտրոնն» էր. որտեղ մ.թ.ա. V-III հազ. տեղի ունեցած «բռնվածից» հետո մացին «վաղագույն հայերը» «կոտակելով իրենց ինքնությունը»: Մ.թ.ա. III հազարամյակում, նրա կարծիքով, հուրրիները «հեռացան արևմտյան կենտրոնական Ասիայից և անցան Կասպից ծովի հարավով. ուղղվելով արևմուտք՝ Անատոլիա. ուր նրանք բախվեցին խեթերին». իսկ մ.թ.ա. II հազ. վերջում «Արարատյան սարահարթ» ("Ararat plateau) եկան «ուրարտացիները», որոնց «...տեղաշարժը Կասպից ծովի հարավով անցումից հետո դեպի հյուսիս հիմնավորվում է կովկասում նրանց տեղով. որը նրանք անվանեցին Էրեբունի»: «Վաղագույն հայերին» եկվոր համարելով Գրեպպինը կարծում է. որ նրանք «քախման մեջ մտան ուրարտացիների» հետ. նրանց «դուրս մղեցին» հյուսիս՝ Դարստան, և «կարող ենք պնդել. որ լեզվները հին ուրարտացիների արդի լարանկախությունն են... հուրրիները և ուրարտեները հյուսիս-կովկասյան լեզուների մասն էին կազմում»: Ըստ Գրեպպինի. «տացվում է. որ «ուրարտացիների» ժառանգորդները լեզգիներն են, իսկ «վաղագույն հայերը» էլ հայկականության կրող չէին. քանի որ «չկա գեթ մի հնագիտական հուշարձան. որը վերաբերի հայկական ինքնությանը՝ մինչ հայերի մասին Դարեհի Բեհիստանի Ք.ա. VI դարի արձանագրությունից տեղեկանալը»: «...Նրանք զրկեցին հսկայական պարսից ուժին. որի հրկոզությամբ կամ ազդեցության տակ մացին մոտ հազար տարի մինչև քրիստոնեական ժամանակաշրջանը» (Greppin J., Some New Ideas on the Status of the Urartian Language in Armenian. JSAS, p. 68-69): Արդյո՞ք հեղինակը նույնիսկ չգիտե Տիգրան II Մեծի դառաշրջանի մասին: Իսկ Կովկասը տեղագրական ինչ կապ ունի Արարատյան դաշտի և Արին-բերդի հետ: Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհը, Կովկասը, «Անատոլիան», ինչպես նաև «արևմտյան կենտրոնական Ասիան» աշխարհագրական տարբեր միավորներ են: Աշխարհագրական և էթնիկ հասկացությունների աղավաղումով հորինված խառնաթիթ տեսությունները չեն նպաստում պատմագիտության զարգացմանը:

մասին անանկ տեսություններ: Իսկ Անանուն Ռավեննացու տեղեկությունների հիման վրա Ռ. Հյուսենի կողմից վերականգնված քարտեզում սխալ է ներկայացված Սյունիքի և Հայոց Արևելյան կողմերի էթնիկական պատկերը: "Siania Caucasorum"[66] («Կովկասյան Սիանիա») էթնոաշխարհագրական անվանումը սխալ մեկնության հետևանքով հայտնվել է Սյունիքի տեղում, իսկ "Albania"-ն՝ Արցախում և Կուրի ձախափնյա տարածքում[67]: Այնինչ «Կովկասյան Սիանիա»-ն ոչ մի կապ չունի Սյունիքի հետ: Անարիկ և միջնադարյան սկզբնաղբյուրներում Հայկական լեռնաշխարհը Կովկասի (Կուրից և Փասիս-Ռիոնից հյուսիս) և նրա լեռնաճյուղերի հետ չի չփոթվել «Կովկասյան Սիանիան» համապատասխանում է «ավանների» բնակեցրած երկրին: Ըստ Ստրաբոնի (մ.թ.ա. 64/63- մ.թ. 23/24 թթ.), սվանները Կովկասի մոտ ապրող փոքր ցեղերից էին[68]:

Ըստ Կլավդիոս Պտղոմեոսի (83-161), Կովկասի «Հիպպիկոն և Կեռաունյան» լեռների միջև բնակվում էին "Σουανοί", "Σουανόκολχοι" (Ռիոնոսի ափին) ի թիվս այլ ցեղերի[69]: Մովսես Խորենացու (V դ.) և նրա գործը յարուցնող Անանիա Շիրակացու (VII դ.) «Աշխարհացույց»-ում նրանք նույնպես հիշատակված են ի թիվս Կովկասի ցեղերի. «Աշխարհ Ասիոյ Մարմատացուց... մուրճի յԵրգանոս Ռոնոսս ծով... եւ անտի առ Կաւկասին լերինն՝ առ Վրոց եւ Աղուանից, մինչեւ ցկասրից ծովն... Եւ ընդ մէջ Գուլդասաց եւ ծովուն Ռոնոսի բնակեն ազգք. Դարդք եւ Ռութք եւ Սուանք...»[70]: Անանուն Ռավեննացու թվարկած մի շարք երկրների (Մեծ Հայք՝ և Փոքր Հայք, Մարմատան, Վրաց և այլն) շարքում հիշատակված

---

[66] Ravenna Anonymus, Cosmographia Lipsiae 1991 II 38-39 (տե՛ս Hewsen R., նշվ. աշխ., էջ 98, 294) Իսկ «Օրենքից (Երվանդունի) Հայաստան, գլ. IV-II գրքեր վերատպությունը կրոց քարտեզում Ռ. Հյուսենը, սառից Սյունիքի, Ուտիքի, Արցախի և Գուգարքի հիշատակության. Հիմնագրի կերպով առանձին երկուսի տեղերում նշել է «տեղուքներ», երրորդի տեղում «երանցիներ» և «ժյուկիներ» ցեղանունները. իսկ չորրորդի տեղում «Երբ(Վրբ)» երկրանունը (Hewsen R. նշվ. աշխ., էջ 33)

Hewsen R. նշվ. աշխ., էջ 98-99:

Σκύθαι καὶ ἄλλα μικρὰ ἔθνη... περὶ τὸν Καύκασον... (Strabo, XI 3 14, 19)

[67] Ptol. I 8 13

[68] Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, Վենետիկ, 1881, էջ 25:

Ռ. Հարությունյանը, հենվելով որոշ ժամանակակից հրատարակությունների վրա, գրում է Greater Armenia (հմմտ. Hewsen R. նշվ. աշխ., էջ 35-37 և այլն) մեջբերումը, այն նույնությամբ օգտագործել է իր կազմած «Հիպոլ Մեծի կարգությունը» "The Empire of Tigran the Great" (The map created in Harutyunyan R., Yerevan 2007) քարտեզում. Այնինչ greater-ը great (մեծ) անվանի համեմատական աստիճանն է՝ «ավելի մեծ». Մեծ Հայք (Մայրագիր Հայաստանի, Armenia Major, տե՛ս Classic Professional Geography Program, 1991 V 12 1) երկու նույն անվանումներն միայն թարգմանությունն է Great Armenia (տե՛ս Armenia and Karabagh The Struggle for Unity, Edited by Christopher J. Walker (London, 1991 p. 7), Մեծ. Մ. Բրոսեի թարգմանությունը. La Grande Arménie (Collection d'historiens arméniens Tr. Archéologue, St. Histoire des Arméniens St.-Pétersbourg 1874 p. 30) բանաձի մեկնաբանությունն է great (A Great-English Lexicon. Oxford 1996 p. 1088) Մեծ Հայք անունը պահպանվել է նաև Հուստինիանոս I-ի (527-565) հրամանագրում. Նեղերին Հայքի կազմակերպությունը՝ Magnam Armeniam quae interior dicebatur, որը Ն. Թարգոյանը թարգմանել է "Greater Armenia which is called Interior" (Adontz N., Armenia in the Period of Justinian translated by Garsoian N., Lisbon 1970 p. 167) այնինչ միայն "Great Armenia" Հանձնաժողովի համար միջնորդեցին, որ Great Armenia թարգմանվում է Մեծ Բիրտանիա Ռ. Հարությունյանը նաև թիրի է ներկայացրել Մեծ

[69] Ptolemaeus Claudius, Geographia Lugduni Batavorum 1605 V 9 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40,

"Albania" անունը ամենևին չի վերաբերում Արցախին: Նմանապես պատմ. գիտ. դոկտոր Հ. Սվազյանը իր «Ամենից այլազարի պատմություն» գրքի քարտեզներից մեկում («Ազվանից մարզպանության տրոհումը և «Ազվանք» անվան նոր հասկացության առաջացումը») «Ազվանքը» «գրանցել է» Արցախի և Ուտիքի տարածքում՝, իսկ Կուրի ձախափնյակում այն բնդհանրապես չի նշել գրելով. «Արգեն VIII դարում ազվանացիները. որպես նախկին Ազվանքի բուն բնակիչներ. այլևս գոյություն չունեին: Ջուլֆիյով եկվոր ժամանակներին. նրանք զուրկ են մղվում պատմության ասպարեզից... «Ազվանք» հասկացությունը կորցնում է մարզպանության ողջ տարածքն արտահայտող նախկին ընդարձակ իմաստը և տարածքային առումով սկսում է գործածվել զանազան միայն նրա հարավային մարզերի՝ Ուտիքի ու Արցախի համար...»[71]: Հ. Սվազյանը, Կուրի ձախափնյա Ազվանքի հիշատակության ժամանակագրական սահմանը համարելով VIII դարը, հարգալանք չի մնացել նույնիսկ իր գրքի վերնագրին աղբյուր ծառայած Մովսես Կաղանկատվացու (և նրա գործը շարունակող Մովսես Դասխուրանցու) «Պատմություն Ազուանից աշխարհի» երեսում «Ազվանքի» հիշատակության ժամանակագրական եզրին. բան Մի գլխի՝ «Անուանք հայրապետացն Ազուանից. ազգ և գործք նոցին» (VI դ. կեսից - X դ. երկրորդ կես)[72] Լանկթամուրի (XII դ վերջ - XIV դ. սկիզբ) ավերիչ ասպատակությունների հետևանքով ազգանական ցեղերը ոչնչացվել, իսկ նրանց մնացորդները գերեվարվել էին հեռավոր Ղանդահար. «որք այժմ կան անդ տաճկական հաւատով զորոց բազումք վկայեն թէ ունին տակաւին յարարողութիւնս իւրեանց ցամանս նչանս Քրիստոնէական. զի առնեն ի վերայ խմորոյ գնայ...»[73]: Ինչ որում, Կուրի ձախափնյա Ազվանքում ապրող հայերի թիվը ավելացել է այդ ժամանակաշրջանում Հայաստանի ծանր վիճակի հետևանքով՝ հայերով բնակեցված բուն Ազվանքի վիճակները պատկանում էին Ս. Էջմիածնին[74]: Շաքիում, Շամախիում և այլ վայրերում հայտնի են հայերի ստեղծած մշակութային արժեքները: Այնպես որ. սկզբնաղբյուրները բերում Կուրի ձախափնյա Ազվանքը յարունակում էր հիշատակվել մինչև XIX դ.

Հայքի տարածքը՝ Տիգրան II Մեծի տերության սահմաններից զատ է գրել Բարձր Հայք աշխարհի Մարի գավառը՝ այն ցույց տալով որպես Գանձակի թագավորության կազմում գտնվող Փոքր Հայքի մաս. իսկ Գուգարքի հյուսիսային մասը մոլորել է վերջի սահմանների մեջ և այդպես էլ ցույց տվել. Տիգրանի տերությունում բնակագրված [illegible] դարձյալ թագավորությունների թվում: Այնինչ Մեծ Հայքի Գուգարք աշխարհի հյուսիսային սահմանը կանգ գնում էր

[illegible] Սվազյան Հ., Ազվանից աշխարհի պատմության (հնագույն ժամանակից մինչև VIII դ. ներառյալ), Ե., 2006, էջ 294:

[illegible] Նույն տեղում, էջ 221:

[72] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Ազուանից աշխարհի՝ Քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 341-347.

[73] Դիտե՛ Հայոց պատմագիրներ, գիրք Գ. մասն երկրորդ. Սիմեոն կաթողիկոսի յիշատակարան. 1763-1767 (թանգիրք). Գիրս Առաքելեանց Գ., Թիֆլիս. 1894. էջ 415

[illegible] Նույն տեղում.

[illegible] Սիմէոն կաթողիկոս Սրմաեցի. Ջուզա. Վաղարշապատ. 1873. էջ 84

[illegible] Մեսրոպ արք Սմբատեանց, Նիկոպոլիս Ս. [illegible] Ս. [illegible] Ս. [illegible] Քեռի. Տփղիս. 1896 և այլն

թե՛ որպես եկեղեցական անվանում և թե՛ աջափնյա հայկական Արցախից առանձին[77]:

Հայ պատմական քարտեզագրության խոշորագույն մասնագետ Սուրեն Երեմյանը պատմական սկզբնաղբյուրների հիման վրա կազմված քարտեզներում Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհների սահմանագիծը հետևողականորեն նշել է Կուրը, որից արևելք, այսինքն՝ գետի ձախ ափին էր «Աղվանք» պատմաաշխարհագրական անվանումը կրող երկիրը : Հայագետ-պատմաբաններից ոչ մեկի մտքով չի էլ անցել էթնոաշխարհագրական բովանդակություն ստացած «Աղվանք» անունը գրել Արցախի տարածքում: Ավելին, պատմական քարտեզագրության կանոններին հակառակ, Հ. Սվազյանն իր այդ գրքում գետեղված վերոհիշյալ և մյուս երկու քարտեզներում նշել է Վիրք և Աղվանք անվանումները , սակայն Հայաստան անվանումը դրանցում բացակայում է:

Սկզբնաղբյուրների հաղորդումների նկատմամբ մակերեսային մոտեցումը չի է դրանց խեղաթյուրված մեկնությունների վտանգով: Այսպես, Բ. Հարությունյանը ոչ միայն անհիմն կերպով սխալ է համարում կամ ժխտում Մովսես Խորենացու հաղորդումները (օրինակ՝ Գարուրյի և Արամի կապակցությամբ), այլև Պատմահորը վերագրում է մտքեր, որոնք չեն բխում նրա շարադրանքից: Պատմահոր հաղորդմանը (Արամը

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 201-202, 358, 362, 366: Շահխաթունեանց Յ., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Հ. Բ. Ս. Էջմիածին, 1842, էջ 343-344. Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 127, 129, ժԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450), Ե., 1955, էջ 194-195, Կարդան արք Օձնեցի, Պատմութիւն Հայոց (Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր N 4331, էջ 91բ - 92ա):

Արցախի և Ուտիքի թեմերի միջնադարյան պատմության բաղկացուցիչ մասն է Հայ առաքելական եկեղեցուն ենթակա «Աղուանից» եկեղեցու պատմությունը, որում արտացոլվել է Կուրի աջափնյա՝ հայկական և ձախափնյա՝ «աղվանական» թեմերի անցյալը: Կուրի ձախափնյա՝ էթնիկապես բազմատարր աղվանական միջավայրում (ըստ Ստրաբոնի, հնում նրանց հեծելագնդերը զինված էին հայերի նման, տե՛ս Strabo, XI. 4.4) քրիստոնեական քարոզությամբ համախմբումը տեղի էր ունենում Հայ Եկեղեցու և Հայոց պետականության ազդեցությամբ: Հայկական ծագում ունեցող «Աղուանք» անվան (Մովսես Խորենացի, էջ 113, տե՛ս նաև Աղաթեկյան Մ. Ա., Ստուգաբանական դիտողություններ «Աղուանք» տեղանվան վերաբերյալ (ՊԲՀ, 1990, N 1, էջ 168-177)) կիրառումը հայկական սկզբնաղբյուրներում եկեղեցական առումով ընդլայնվեց, դրանով իսկ «Աղվանից», այնուհետև՝ Դանձասարի կաթողիկոսությունը (մինչև 1815 թ. մետրապոլիտության ստեղծումը) ներկայացված էր ինչպես Հայոց Արևելյան կողմերի (Կուրի աջափնյակում), այնպես էլ Կուրի ձախափնյա թեմերով: «Աղվանից» եկեղեցի անվան «գաղափարումը» նաև Հայոց Արցախի և Ուտիքի թեմերի առումով ոչ թե էթնիկական երևույթների կամ վարչաքաղաքական ենթակայության (քանզի Արցախը և Ուտիքի մեծ մասը երբեիցե չեն եղել «Աղվանից մարզպանության» մեջ և, պատկանելով (428 թ. հետո) իրենց ինքնուրույնությունը, հետագայում ընդգրկված են եղել Հայկական պետականության՝ Վաչագանի թագավորության, Բագրատունյաց թագավորության, Զաքարյանների իշխանապետության, Խաչենի իշխանության, Խամսայի մելիքությունների զարգացումների մեջ), այլ եկեղեցաիրավական վիճակի արգասիք էր, և դրանով իսկ «Աղվանք» երկրանունը չի կարելի քարտեզագրել Արցախի և Ուտիքի տարածքների վրա:

Սվազյան Հ., Նշվ. աշխ., էջ 292-293:

«Թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւրմէ... »[80] կամայական մեկնություն տալով Բ. Հարությունյանը նախ ժխտել է Մշակի հայ լինելը («...անունն անգամ վկայում է, որ նա ամենայն հավանականությամբ մուչկ է կամ ժոյուգացի»), այնուհետև, իր մտացածին «տեսությունը» («...նվաճվելով Արամի կողմից եկվոր մուչկերը կամ փոյուգացիները պարտավորվում են դառնալ նրա ազգը կամ ժողովուրդը և իրենց վրա են վերցնում հայոց թագավորի անունը») վերագրելով Մովսես Խորենացուն, գրել է. «Պատմահայրը այստեղ ևս հիշում է: Արմեն անունը ոչ թե կապվում է ինչ-ինչ արմենական ցեղախմբի անվան հետ, այլ թագավորի անունն է, որ սկզբում տարածվում է թագավորության արևմուտքում հաստատված փոյուգացիների վրա, իսկ այնուհետև տարածվում է Հայաստանի բոլոր բնակիչների վրա...»

Մինչ Մովսես Խորենացու տեքստի մեկնությունը աղավաղված ներկայացնելը Բ. Հարությունյանը կարող էր խորանալ Պատմահոր նշած Արամ Ճանապետի՝ որպես հայոց երկրորդ անվանադրի նախնու անվան հիշատակության և դրա հետ կապված երկրանվան ծագման և պատմագիտական մեկնությունների ուղղությամբ: Մովսես Խորենացին գրել է. «Արամայ բազում գործք թաւութեան պատմին մարտից նահատակութեան, և ընդարձակեալ զսահմանս Հայոց յամենայն կողմանց. յորոյ անուն և զաչխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Ցոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիկք»

Հենվելով Սարգոն Աքքադացու (մ. թ. ա. 2316-2261 թթ.) և նրա թոռան՝ Նարամ-Սուենի (մ. թ. ա. 2236-2200 թթ.) դեպի հյուսիսային երկրներ կատարած արշավանքները նկարագրող արձանագրությունների տեղեկությունների («մայրու անտառներ», «Արծաթի լեռներ», Արմանում երկրի թագավոր, որի հետ բախվել էր Նարամ-Սուենը և այլն) վրա՝ Ա. Կիֆիշինը գրել է. «Մայրու անտառները հիմնականում գտնվում էին Ամանոսի շրջանում Ասորիքում, իսկ արծաթի հանքերը՝ Փոքր Ասիայում և Հայաստանի լեռներում..., ըստ երևույթին, Սարգոն Աքքադացին հաղորդում է Եփրատի շրջանում գտնվող երկրների մասին»: Ա. Կիֆիշինը Նարամ-Սուենից հասած տեղեկություններից եզրակացրել է. «Ավելի շուտ մեր առջև է Հայաստանի հնագույն հիշատակությունը (մ.թ.ա. III հազարամյակ), որը մ.թ.ա. I հազարամյակից հիշատակվում էր որպես Արմե երկիր»[83]: Վայշ. Իվանովը, չեշտելով մ.թ.ա. III հազարամյակի կեսերով

---

[80] Մովսես Խորենացի, էջ 46:

[81] Հարությունյան Բ., Թագարամա երկիրը..., էջ 143:

[82] Մովսես Խորենացի, էջ 42:

[83] Кифишин А., Географические воззрения древних шумеров при патеси Гудеа (2162-2137 гг. до н.э.) (Палестинский сборник, вып 13 (76), 1965, с. 64-66). Հայկական ցեղերի լեզվից ազգագրենների փոխառնվել է արմանու(մ) («եղիրան», «եղիրանի ծառ») բառը (Мкртчян Н., Субстратная лексика армянского языка (Древний Восток, 4, Е., 1983, с. 25), Джаукян Г. Б., О соотношении хаттского и армянского языков (ՊՊՀ, N 2, 1988, էջ 86)): Աքքադական աղբյուրներում վիշտակված և Եփրատի վերին հոսքում տեղադրվող Արմանումի քաղաքանունը կապ ունի հայերի անվան հետ (Ջահուկյան Գ. Հայոց լեզվի պատմություն, էջ 473).

թվագրվող՝ էբլայից հայտնաբերված արձանագրություններում հիշատակվող Haia տեղանվան և ցեղանվան համապատասխանությունս Armiին և Azi-ին, նշել է, որ ապացուցվում են ակադեմիկոս Դ. Ղափանցյանի եզրակացությունները և Ր. Ռյակոնովի տեսակետի (հայերի ծագումնաբանության հետ առնչվող հարցերի կապակցությամբ) սխալ լինելը[44]: Վյաչ. Իվանովը նշել է, որ էբլայի արձանագրություններում հիշատակվող Armi քաղաքի շրջանը նույնացվում է Աքքադացի Նարամ-Սուենի արձանագրություններում հիշատակվող Armanum-ի հետ: Նկատի ունենալով էբլայի արձանագրություններում նաև Azi-ի հիշատակությունը (որն ինքը մեկնում է որպես շրջանի անուն)՝ Վյաչ. Իվանովը եզրակացրել է. «Նշված անվանումները խմբավորվում են այն վայրերի շուրջ, որոնք մոտ են պատմական Արմենիային (Հայաստան) և լուրջ հիմքեր են տալիս փնտրելու արտաքնապես նրանց մոտիկ անվանական և ցեղանվանական այն բավական վաղ տարրերը, որոնք էական են հայերի ծագումնաբանության համար»[45].

Հայկյան ակունքները «երիտասարդացնողները» պետք է իրենց տոմարագիտական հետազոտությունների հայեցակարգային մոտեցումներում հիշեն Հովհաննես Իմաստասերի (1045-1129 թթ.) պահպանած տեղեկությունը «Հայկյան տոմարի» հնության մասին. «Հաւատ եւ գիր եւ տումար այս երկու ազգիս միայն ետ Աստուած, եւ այլոց ազգացդ՝ մարդկան են արարեալ. գիրս Հայոց՝ աստ ի վերայ վիմի հրեղէն աջով. անդ՝ ի տախտակս ոարեղէնս. զտովմարս՝ անդ Մովսէս, աստ՝ Հայկն. յառաջ քան զնա»[46].

Հայոց պատմության հիմնահարցերի հետազոտության հայագիտական հայեցակարգը հնարավորություն է տալիս բացահայտել պատմագիտությանը վնաս հասցնող աղավաղումները և սկզբնաղբյուրների վերլուծությամբ լուսաբանել պատմական ճշմարտությունը:

---

[44] «Հնդեվրոպական նախահայրենիքի» մասին Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի տեսությունը քննադատելիս Ի. Դյակոնովը նշել է, որ եթե ինքն իմանար, թե ինչ է եղել իրականում, «ապա կշարադրեր իր սեփական տեսությունը, այլ ոչ թե կքննադատեր ուրիշների» [Дьяконов И. М., О прародине носителей индоевропейских диалектов, II (ВДИ. 1982. N 4 с 24)]

[45] Иванов Вяч. Вс., Выделение разных хронологических слоев в дреневарманском и проблема первоначальной структуры текста типа Ba(r)ano (ПРЛ. N 4. 1983. էջ 30-33).

[46] Մանրամասն տոմարիս Հայկազնեայց (տե՛ս Աբրահամյան Ա., Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե., 1956. էջ 223): Հայկի՝ որպես հայկական տոմարի հիմադրի մասին Անանիա Ներսիսյանց և Հովհաննես Սարկավագի տեղեկություններին մանրամասն անդրադարձել է Գր. Բրուտյանը (նշվ. աշխ. էջ 159-160, 239-240).

ОПАСНОСТЬ ИСКАЖЕНИЯ ФУНДАМЕНТАЛЬНЫХ ВОПРОСОВ ИСТОРИИ АРМЕНИИ

ДАНИЕЛЯН Э. Л.

Резюме

В геополитически изменчивых современных условиях при решении вопросов, имеющих для армянского общества политическое, идеологическое и духовное значение, насущным является познание истоков отечественной истории. На сегодняшний день мы сталкиваемся с "рецидивами" фальсифицированной интерпретации источников, а также с псевдонаучными теориями, которые возрождают "традиции" псевдокритического "гиперкритицизма". Арменоведческая концепция исследования фундаментальных вопросов истории Армении позволяет (на основе источниковедческого анализа) выявить историческую истину, а также раскрыть суть фальсификаций, наносящих ощутимый вред исторической науке.